ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵԲԱՍՏԻՈՅ

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս Առաջնորդութեան Տ. Կարապետ Բ. Սեբաստացոյ Եպիսկոպոսի Սեբաստացւոյ եւ վասն անցիցն որ յաւուրս նորա:

Քրանաշխատ և հաւատարիմ պաշտօնեայն Ս. Նշանի Մենասատանիս և անձնուէր Հովիւն Սեբաստեան գաւառիս Տ. Կարապետ Վրդպտ. այս՝ որպէս յիշատակեցաք ի վեր անդր՝ վարժեալ և զորգացեալ յոտս Գերամեծար Տ. Տ. Յակոբայ Սըբազան Արքեպս. ի և սրբալոյս օծմամբ 'ի նմանէ յամի Տեառն 1798 = ՌՄԽԷ, ընդ չնորհափայլ Տեառն Յովհաննու ընկերակցին իւրոյ 'ի վարդապետական նախընծայ կենաս իւր հանդիսանայ մեղուջան գործակից և լծակից Յովհաննու օծակցին իւրոյ և Տուն Ս. Նշանեան իրաւամբ պարծի ընդ հոգեզգօն անուշեալսն 'ի ծոց իւր։ Կարապետ Վրդպտ. յաւուրս Առաջնորդութեան Տեառն Յովհաննու անձնուէր և խոնարհ գործակից գտեալ նմա տիւ և գիշեր անդադար տքնի 'ի չինութիւն և 'ի պայծառութիւն Ս. Վանուցս, և պատուի 'ի Տ. Յովհաննէս Արքեպս. ի տիրակցութեան, գաւազանակրութեան մեծարանօք, որոց արդարև արժանաւոր էր իրաւամբ։ Եւ յետ վրդնմանն Տեառն Յովհաննու Արքեպս. ի միաձայնութեամբ վանական միաբանակից Ս. Հարց և համարքէն ժողովրդեան ազերբանօք հաստատի Առաջնորդ Պատրիարքական հրամանաւ և արքունական հրովարտակաւ և ժամանէ ընդհուպ կոնդակ օրհնաձիր 'ի Տ. Կարապետ Ս. Պատրիարքէն Կ. Պոլսոյ յամի Տեառն 1830 = ՌՄՀԹ։ Եւ Կարապետ Վրդ. վայելեալ զարժանահատոյց տրիտուրն եբախտագիտական զգացմանց ասաուածասէր ժողովրդեանն գուն գործէ ևս քան զևս արդիւնաւորել զստանձնեալն իւր զպաշտօն Առաջնորդական և հանապազորդէ 'ի նմին։ 'ի սկիզբն պաշտամանն՝ նպաստիւք բարեպաշտ Դասապետեան Մ. Յակոբ աղայի՝ նորոգէ զգաւիթ Ս. Աճատնի Տաճարի՝ Ս. Մենասատանիս՝ բառնալով զերկուց կողմանց զդրանդեօքն խարանաձև սիւնամբարձ հնացեալ խարխուլ չէնան 'ի գաւթին և հարթեալ վայելչապէս։ Փոխադրէ նաև զնշխարս Գեղարդաւոր Պետրոս կաթուղիկոսի՝ 'ի մէջ նոյն Ս. Աճատնայ Տաճարին։

Յետ այսորիկ ազերս մատուցեալ առ Հիւպատոսն Ռուսական՝ յաջողի քարուկիր որմով շրջապատել զՍ. Լիճն Գեղարանից Մանկանց և այնու պաշտպանել 'ի գարշ ապականութենանց անօրինացն և զԱ. Գարն իջմանն փոխադրէ 'ի վանս Սուրբ Նշանի։ Եւ զմերձակայ գետինս Ս. Վանուցն մասամբ իւրք կրկին կցորդեալ պարտիզին բաւական ընդարձակութեամբ ընդլայնէ բարեպաշտական ձեռնտուութեամբ Եօզդատցի Փափազեան Յովհաննէս իշխանին, հաստատուն և մարդաշափ բարձրութեամբ քարաշէն պարսպաւ պատչան պարեաց զպարտէզն և 'ի ննջելն նորին հոգեսէր իշխանին՝ Յովհաննու, հանդերձ ցանէ զմամին նորա առաջի տրամանքն դրան Ս. Աճատնի մատրան՝ 'ի վարձատրութիւն բարեացն և 'ի քաջալերութիւն ապառաստիրտ բարեպաշտից։ 'ի ամին Ժամանակի 'ի հիմանց կանգնէ նաև Տ. Կարապետ Վրդպտ. զվանս Ս. Հրեշտակապետի բովանդակ արդեամբ բարեյիշատակ Ցեսբութիւն վարդապետի, Միաբանի նոյն վանուցս։ Եւ մինչդեռ Տ. Կարապետ Վրդպտ. նորընտիր Առաջնորդն Մեծանտիոյ խոկայ և անձանձիր աքնի 'ի քարն

digitised by A.R.A.R.@

զարդուԹիւն Ս. Վանուցս և 'ի չահ Հայրենեաց, այլ զի ամենաչարն Սատանայ մախոյ հանապազ ընդ բարիս՝ վասն այսորիկ արկեալ զմահացու Թոյն իւր 'ի սիրտս չարակամաց ոմանց չարախօսել և զրպարտել տայ՝ զմաքրակենցաղ վարուք փայլեալն զՏ. Կարապետ Վրդպտ. և տառապարտ յանձին գրգռմունք և յուզմունք ո՛չ սակաւք. մինչ հասանել աղմկանն 'ի Պատրիարքարան Կ. Պոլսոյ, արդ վասն Տ. Կարապետ Վրդպտ. ընկալեալ զգիր հրաւիրանաց 'ի Տ. Ստեփաննոս Աղաւնի Պատրիարքէ յամի Տեառն 1831 = ՌՄՁ մեկնի 'ի Սեբաստիոյ և փուԹայ 'ի Կ. Պոլիս, 'ի քննուԹիւն ասացելոցն զինքենէ. իսկ 'ի տեղի իւր Պատրիարքական հրամանաւ գայ փոխանորդ՝ առ 'ի Սեբաստիա ԲարԹուղիմէոս Վրդպտ. ոմն, և անկարող լինելով կառավարել զգաւառն հազիւ մնացեալ ամիսս ինն մեկնի փուԹանակի.

Իսկ Տ. Կարապետ Վարդապետ՝ պահանջէ խիստ քննուԹիւն 'ի Սրբազան Պատրիարքէն, սակս որոյ կոչեն զզրպարտիչսն հանդէպ նմին և Ատեան կազմեալ սկսանին քննել զասացեալսն և յետ մանրամասն քննուԹեանց՝ բացայայտ լինին անհիմն Թշնամանք և ստայօդ բարբաջանք, որով բարձրագլուխ պանծայ անմեղուԹիւն Տ. Կարապետ Վրդպտ.ի և արդարացեալ շնորհօքն Աստուծոյ և պարգևօք հանդիսացեալ հայրական վեհանձնուԹեամբ ներումն շնորհէ մոլորեալ ամբաստանողացն և մեծարեալ յԱւագաց և յիշխանաւորացն Կ. Պոլսոյ վերադառնայ յԱԹոռն իւր 'ի բնագաւառն Սեբաստիա, յորում ժողովուրդն համօրէն ակնդէտ սպասէին բերկրապատար գալստեան Ս. Հօրն իւրեանց, և խնդալից սրտիւ և խաղաղական ոգւով անցեալ 'ի գլուխ պաշտամանն իւրոյ կրկնակի փառօք և անսպառ ողորմուԹեամբն Այ. հովուէ և մխիԹարէ զհօտն իւր սիրեցեալ. Եւ քանզի քրտնաջան վաստակաւոր էր Հայրենեացն և արժանի մեծամեծ վարձատրուԹեանց, ուստի և սիրայօժար խորհրդով Միաբանակից Ս. Հարց և սրտեռանդն տենչանօք հոգեսէր ժողովրդեանն, Տ. Կարապետ Վրդպտ. առաքի 'ի գերագահ Մայր ԱԹոռն Ս. Էջմիածնի առ 'ի առնուլ զկարգ և զօծումն եպիսկոպոսուԹեան Նահանգիս. Եւ կամօքն Այ. վայելեալ զեպիսկոպոսական երկնապարգև պատիւն յԵրջանկայիշատակ Տ. Յովհաննէս Ը. Սրբազնագոյն ԿաԹուղիկոսէ՝ Կարբեցւոյ՝ յԱմի Տեառն 1835 = ՌՄՁԴ վերադառնայ 'ի ծոց Աստուածապահ Քաղաքիս, 'ի հովանաւորուԹիւն հրաշապանծ Ս. Մենաստանիս, 'ի հոգևոր զմայլմունս Միաբանակցաց Ս. Ուխտիս և յանչափ հրճուանս համօրէն ժողովրդեանն, որք լցեալ արտասուօք և սրտաբուխ յուզմամբք ողջագուրեն զփառաւորեալ Ս. Հայրն իւրեանց զպատուեալն 'ի մեծագոյն իշխանուԹեանց. Եւ շնորհաբաշխ օծուԹիւն նորապսակ Տ. Կարապետ Ս. Եպիսկոպոսի Սեբաստացւոյ բազում բարիս և շահեկանուԹիւնս եբեր յերկիրն Սեբաստեան բերկրալից գալըստեամբն. Ս. Նշանեան ԱԹոռն մեծապէս պանծայր 'ի շրջակայ սահմանակից գաւառս՝ հոգևոր և նիւԹական ճոխուԹեամբ և Նահանգն Սեբաստիոյ զամ քան զամ բարեյաջողուԹեամբք ցանկալի և գովելի հանդիսանայր ամենից, խնամօք Ամենակալին և ազգանուէր ջանիւք Վերատեսչին իւրոյ Տ. Կարապետ Ս. Եպս.ի որ վայելէր զընդհանրական համակրանս և զճշմարիտ մեծարանս՝ ամենայն դասու ժողովրդեանն. Կարապետ Եպս. միաբան խորհրդով և գործակցուԹեամբ իշխանաց և երևելեաց քաղաքիս ջանահնար լինի նաև 'ի հիմանէ վայելչապէս և հոյակապ կառուցանել զՄայր Եկեղեցին քաղաքիս և յետ բազմադիմի աշխատուԹեան յաջողի առնուլ զհրամանագիր արքունական վասն շինուԹեանն՝ ձեռամբ Րէշիտ Փաշայի, կուսակալին Նահանգիս, և նպաստիւք աստուածասէր ժողովրդեանն ձեռն արկանէ շինուԹեանն և հանդիսաւորապէս կատարէ զարարողուԹիւն հիմնարկուԹեան և հասեալ յաւուրս ծերուԹեան և անկեալ 'ի մահիճ աւանդէ զհոգին յետ կարճատև հիւանդուԹեան յամի Տեառն 1842 = ՌՄՂԱ, իբրև զամս երկոտասան վարելով զԱռաջնորդուԹիւն Նահանգիս Սեբաստիոյ և ամփոփի մարմինն ամենայն հանդիսաւորուԹեամբ 'ի գաւիԹ Ս. Նշանի Մենաստանիս՝ 'ի շարս հոգելոյս հովուակից եղբարցն իւրոց.

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Տեւչութեան Կարապետ Գ. Եպս.ի Գալֆայեան Էվէրէկցւոյ, եւ վասն անցիցն որ յաւուրս նորա:

Յետ վախճանելոյ Տ. Կարապետ Բ. Ս. Եպս.ի Սեբաստացւոյ, Առաջնորդական Աթոռ նահանգիս մնաց թափուր, թէպէտև Միաբանական Վարդապետք հոկեն բարւոքապէս Ս. Նշանի Մենաստանիս. վասն որոյ և խորհուրդք լինին յընտրել զարժանաւոր ոմն 'ի նոցանէ յԱռաջնորդութիւն Սեբաստիոյ։ Այլ սակայն երկպառակութիւնք ծագին վասն ընտրութեան միոյն կամ միւսոյն 'ի Միաբան Վարդապետացն ք և գժտին ընդ այս առաջնորդք քաղաքիս և մնայ խնդիր ընտրութեանն անորոշ և անկերպարան, յայս ապա հարկադրի ժողովուրդն խնդրել 'ի Տ. Աստուածատուր Պատրիարքէն Կ. Պոլսոյ արժանաւոր ոմն իբր Առաջնորդ՝ 'ի հոգեւոր խնամս և 'ի մատակարարութիւն ժողովրդեանն։ Ուստի և Պատրիարքական Կոնդակաւ և արքունի հրովարտակաւ կարգի Առաջնորդ Վիճակիս Տ. Կարապետ Վրդպտ. Գալֆայեան՝ յԷվէրէկ գիւղէն Կեսարիոյ՝ Միաբան Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց որ յԵրուսաղէմ և որ ժամանեալ գայ յիւր պաշտօնատեղին 'ի Սեբաստիա և սկսանի վարել զԱռաջնորդական պաշտօնն և զվերատեսչութիւն Ս. Նշանի Մենաստանիս։ Եւ Միաբանական Ս. Հարք՝ աւետարանական հեզաբարոյութեամբ ո՛չ յիշելով բնաւ զանցեալ գժտութիւնս՝ յընտրողական գործս՝ վասն ինքեանց՝ եռանդեամբ պատուեն զնորընտիր Առաջնորդն՝ զՏ. Կարապետ Վարդապետ, և ըստ ամենայնի գործակից և օգնական գտանին նմա չուրջ բոլորեալ զնովաւ խնդալից սրտիւք և բարեպաշտ ժողովուրդն եւս՝ ուսեալք և օրինակեալք 'ի հոգեւոր Ս. Հարցն իւրեանց արժանաւոր և վայելուչ մեծարանօք ընդունին զվերատեսուչն իւրեանց և ժողովին ընդ հայրական թեւօք նորա յամենայն գործս պիտանիս և հրամանաց նորա հլու և հնազանդ կատարիչք, որովք և յանհնանս ուրախացեալ Տ. Կարապետ Վրդպտ. և որ ըստ օրէ տեսեալ զեռանդ և զխանդ բարեպաշտ ժողովրդեանն Սեբաստիոյ՝ գուն գործէր արդիւնաւորել զստանձնեալն իւր զպաշտօն։ Որպէս պատմեցաք 'ի վեր անդր՝ ջանիւք Կարապետ Բ. հոգելոյս Առաջնորդի՝ հիմն Մայր Ս. Եկեղեցւոյ քաղաքիս արկեալ էր՝ 'ի վերջին աւուրս իւր և վախճանմամբ նորա թերի մնացեալ էր շինութիւնն մինչ ց'ժամանումն նորընտիր Կարապետ Վրդպտ.իս վասն որոյ 'ի ժողով գումարին Ածասէր իշխանք և ժողովուրդք քաղաքիս և բանան հանգանակութիւնս զուարթառատ նպաստից և սրոց իւրեանց և 'ի կատար հանեն զգործ շինութեանն Ս. Ածածին Մայր Եկեղեցւոյ համակ քարաշէն հաստատուն և հոյակապ, և աւարտեալ օգնականութեամբ Ամենակարողին Աստուծոյ և քրտնալից աշխատութեամբք համօրէն ժողովրդեան մեծաւ շքով և բերկրապատար խնդութեամբ կատարեալ տան զօծումն Տեառն Կարապետ Վարդապետի՝ յամի Տեառն 1851։ Ի շինութեան Ս. Եկեղեցւոյս երևելի հանդիսանան Գասպարեան Մ. Յակոբ և Էսթար Յովսէփ բարեպաշտ իշխանք՝ շնորհելով մեծաքանակ դրամս՝ և որոց շիրիմք կան շքեղապէս եդեալ 'ի գաւթի։

Յետ այսորիկ Կարապետ Վրդպտ. ամենայն եռանդեամբ հոգատար լինի արդիւնաշատ երկրագործութեան Ս. Նշանի Մենաստանիս, և բազմապատկէ զանասնական նախիրս ոչխարաց, եզանց, եւն., և պայծառացուցանէ զՍ. Մենաստանս միաբանական կարգադրութեամբ։ Ապա ձեռն արկանէ քակել 'ի հիմանէ զհնատահիմն պարիսպ պարտիզի Ս. Նշանի Վանուցս և ընդարձակեալ զպարտէզն՝ կանգնէ պարիսպ աղիւսաշէն, ոչ նուազ կարևոր նորոգութիւնս առնելով նաև 'ի խարխլեալ շէնսն Ս. Նշանի Մենաստանիս որք հարկաւորք էին։

Եւ քանզի բարեպաշտական ձրիւք օժտեալ էր ժողովուրդն, վասն որոյ բաղձային անընդհատ պահել զեպիսկոպոսութիւն Առաջնորդական Աթոռոյն Սեբաստիոյ, այս վասն 'ի վեր հանեն զխնդիր եպիսկոպոսացուցանելոյ զՏ. Կարապետ Վարդապետն՝ զԱռաջնորդն քաղաքիս, և արարեալ իշխանաց, քահանայից և ժողո-

digitised by A.R.A.R.@

վերդեան զգիր բազմատորացիր զարժանաւորութենէ նորին, առաքեն զնա 'ի Մայր Աթոռն Արարատեան։ Եւ նա ժամանեալ 'ի Ս. Էջմիածին առնու զօծութիւն եպիսկոպոսական 'ի Տ. Տ. Ներսէս Ե. Ս. Կաթուղիկոսէ Աշտարակեցւոյ, յամի Տեառն 1849 և վերադառնայ 'ի պաշտօնատեղին իւր 'ի Սեբաստիա, ընդ որ ուրախացեալ ժողովուրդն, ողջագուրէին խնդութեամբ զնորապսակ դէմ իւրեանց և Ն. Սրբազնութիւնն՝ բոլորեալ զիւրև ըզհոգեշնորհ խումբ Միաբանական Ուխտի Ս. Նշանի և զիշխանաւորս և խաղաղութեամբ վարէ զպաշտօնն և վայելէ զեպիսկոպոսութիւնն։

Յետ ամաց ինչ ազգայինք ոմանք չահախնդիր ոգւով հեռախոյզ լինին քննել և ճշդել զհաշուական գործողութիւնս երկար ամաց և զարդիւնս Ս. Նշանի Վանուց որք յանձնեալ էին անյայտ 'ի ձեռն Կարապետ Եպիսկոպոսի։ Վասն որոյ յընդարձակ Առաջնորդարանի Ս. Մենաստանիս 'ի ժողով գումարին Տ. Մեսրոպ և Տ. Գէորգ աւագ Քահանայք և իշխանք քաղաքիս՝ Ղասապպաշեան Մ. Յակոբ, Էսթար Յովսէփեան, Աշպահեան, Բժիշկ Մկրտիչ Մեսիայեան և այլք և թախանձեն զՏ. Կարապետ Եպս. տալ զհաշիւ Ս. Վանուց, և գոհացուցանել զբողոքարկուս։ Եւ Կարապետ Եպս. յետ բազում ընդդիմութեանց՝ յորդորանօք բարեկամաց իւրոց խոհականաց զիջանի և յանձն առնու վերաշինել զՍ. Կարապետի Տաճարն՝ որ հնացեալ էր բոլորովին, ըստ պատրաստեալ յատակագծին իւրում։ Այսու խոստմամբ և 'ի ներկայութեան հոգևոր և իշխանաւոր ժողովականաց 'ի ձեռին առեալ զաստուածընկալ Ս. Կենաց Փայտն ուխտէ և վստահացուցանէ զժողովուրդն։ Յետ ժամանակաց, Միաբան Ս. Հօրք Ս. Մենաստանիս և իշխանաւորք խորհուրդ առնեն որբալոյս օծման և վարդապետական պատուոյ արժանացուցանել տալ զշնորհաւուն Բարսեղ դպիրն Թահմիզճեան՝ որ յառաջագոյն պատուեալ էր 'ի Տ. Կարապետ Բ. Արքեպս.է դպրութեան աստիճանաւ և ընծայեալ Ս. Մենաստանիս, վասն որոյ համահաճ բաղձանօք ժողովրդեան Տ. Կարապետ Եպս. հրաւիրէ զնա 'ի պաշտօնէութիւն Քրիստոսի և անհատանելի կամօքն Աստուծոյ վայելէ զօծումն որբալոյս և զվարդապետականն աստիճան՝ Տ. Պետրոս անուամբ՝ յամի Տեառն 1851։ Տ. Պետրոս Վարդապետ ընդ հովանեաւ հոգևոր ծնողին իւրոյ փայլի օր քան զօր յաջողանուէր գործս և պատուաբեր հանդիսանայ հայրենեացն և Տ. Կարապետ Եպս.ի և յառաջդիմէ 'ի վաստակաշատ աքնութիւնս, որոյ վասն Կարապետ Եպս. և Միաբանական Ուխտ Ս. Մենաստանիս արժան և վայելուչ համարին ծայրագոյն աստիճանի Վարդապետութեան, որ ժամանէ և զծայրագոյն պատիւ վարդապետական 'ի Տ. Կարապետ Ս. Եպիսկոպոսէ։ Յետ այսորիկ (1857), իշխանք քաղաքիս համահաճ հաւանութեամբ Տ. Կարապետ Եպս.ի՝ մատուցանեն խնդիր յԱզգ. Պատրիարքարան զի շնորհեսցի զԱռաջնորդական Փոխադրութիւն Վիճակիս Տ. Պետրոս Ծ. Վրդպտ.ի, ընդ որ անյապաղ ժամանէ Պատրիարքական կոնդակ օրհնաձիր 'ի հաստատութիւն Փոխ-Առաջնորդական պաշտօնի Տ. Պետրոս Վրդպտ.ի որոյ արժանացեալ գամ քան զգամ մեծագոյն և վայելուչ պատուոյ մատոյց իւր ջանայ յաջողանուէր ծառայութիւնս։ 'Ի սմին ժամանակի Տ. Կարապետ Եպս. ըստ կանխագոյն խոստմանն ձեռն արկանէ 'ի գործ հիմնարկութեան Ս. Կարապետի Տաճարին Մենաստանիս և պատրաստեալ զծախսն գոհացուցանէ զաշխատաւորս և զգործաւորս և բաւական յառաջացուցեալ զգործ շինութեան՝ յաղագս տկարութեան աչացն մեկնի 'ի Կ. Պօլիս յանձն արարեալ զշինութիւնն հոգևոր որդւոյն՝ Տ. Պետրոս Ծ. Վրդպտ. որ խոհական իմաստութեամբ և անվեհեր յառաջ մղէ զգործն և օժանդակութեամբ հոգեսէր ազգայնոց՝ 'ի կատար հանէ զշինութիւն փառապանծ և հոյակապ Ս. Կարապետի Տաճարիս, և ուրախ առնէ զժողովուրդն։ Եւ Կարապետ Եպս. գնացեալ 'ի Կ. Պօլիս և վարեալ անդ նաև զպաշտօն Պատրիարքական Փոխանորդութեան՝ յաւուրս Տ. Յակոբայ Սրբազան Պատրիարքի, փոքր ինչ ժամանակս, վերադառնայ 'ի Սեբաստիա, և աւարտեալ գտանէ զսկսեալն իւր զգործ, ջանիւք հաւատարիմ փոխանորդին իւրոյ Տ. Պետ-

digitised by A.R.A.R.@

բոս Ծ. Վրդպտ.ի։ Եւ ժողովուրդն ընդունի սիրայօժար և ըստ առաջնոյն մեծարէ զանձնուէր Առաջնորդն իւր զՏ. Կարապետ Ս. Եպս.։

Այլ յետ ամաց ինչ խռովի բովանդակ ժողովուրդն Սեբաստիոյ յերեսաց Անդրանիկ Վարդանեան, կիւրինցի Ճանայ Պէկեան և Քրիստոսուր Ղազարոսեան անձանց արք առաքին յԱզգ. Պատրիարքարան թուղթ ծանր ամբաստանութեան ըզկարապետ Եպիսկոպոսէ, որ կոչի 'ի Կ. Պոլիս՝ հանդերձ բողոքարկու ազգայնովք առ 'ի տալ զբացատրութիւն զամբաստանութեանցն։ Եւ Կարապետ Եպս. գնացեալ 'ի Կ. Պոլիս մնայ անդ ընդ երկար ժամանակս և փոխանակ նորա առաքի 'ի Սեբաստիա Տ. Երեմիա Եպս. իբրև Տեղապահ։ Կոչի և Տ. Պետրոս Ծ. Վրդպտ. 'ի Կ. Պոլիս վասն քննութեան՝ խնդրոյն Տ. Կարապետ Եպս.ի, և 'ի քննին առեալ զմատուցեալ ամբաստանութիւնս, Ազգ. Պատրիարքարանն հրաժարեցուցանէ զՏ. Կարապետ Եպս. յԱռաջնորդական պաշտօնէն Սեբաստիոյ և հրամայէ Տ Ցակոբ Ս. Եպս.ին Եւդոկիոյ գալով 'ի Սեբաստիա և ձեռն արկանել Առաջնորդական նորոգ ընտրութեան։ Ընդ այս վեր 'ի վայր յուզի բովանդակ ժողովուրդն Սեբաստիոյ՝ քաջալերօք լինելով անպարտութեան Տ. Կարապետ Եպս.ի զի ամբաստանութիւնք վերոյ գրելոցն զրպարտութիւն էին բովանդակ և արդիւնք անձնական կրից և չանխնդիր ոգւոց, որոյ վասն վերստին խնդրեն զնաստատութիւն Տ. Կարապետ Եպս.ի յԱռաջնորդական պաշտօն քաղաքիս։ 'Ի սմին ժամանակի Տ. Կարապետ Եպս. անձայն անչշուկ մեկնի 'ի Պոլսոյ և հազիւ հասանէ յԱմասիա՝ արգելուի թէև, սակայն դարձեալ գայ ժամանէ յԵւդոկիա։ Ընդ խռովութիւնս յայսոսիկ Տ. Եղեմիոս Եպս. յընդդիմութենէ ժողովրդեանն Սեբաստիոյ մեկնի ատի և հասանէ 'ի Կ. Պոլիս։ Իսկ Տ. Պետրոս Ծ. Վրդպտ., որ գնացեալ էր 'ի Կ. Պոլիս՝ ներկայանայ յԱզգ. Պատրիարքարան, և 'ի ձեռն Քննիչ Յանձնաժողովոյ՝ քննուտելն յայտ առնէ զատացեալոցն, և մնայ անդ ժամանակս ինչ։ Եւ Ցակոբ Եպս. Եւդոկիոյ ըստ պատրիարքական հրամանի եկեալ 'ի Սեբաստիա, գումարէ 'ի նիստ զԳաւ. Երեսփոխանական Ժողովն վիճակիս և 'ի ներկայութիւն երեսուն և երկու երեսփոխանաց կատարի զԱռաջնորդական ընտրութիւնն։ Մի քուէ ատանայ Երեմիա Եպս. և երեսուն և մէկ քուէ Տ. Պետրոս Ծ. Վ. Թեմիրճեան և ըստ օրինի ընտրի Առաջնորդ Վիճակիս, և ընտրական արդիւնք տեղեկագրին յԱզգ. Պատրիարքարան։ Յետ այսորիկ Տ. Կարապետ Եպս. որ մնայր յԵւդոկիա, վերադառնայ 'ի Սեբաստիա և հասեալ 'ի Ս. Նշանի Վանս վայելէ զիւրն հանգիստ։

Իսկ Ազգ. Պատրիարքարանն ընկալեալ զՏեղեկագիր Տ. Ցակոբայ Ս. Եպս.ի Եւդոկիոյ և երեսփոխանական Ժողովոյն Սեբաստիոյ հաստատէ և վաւերացուցանէ զընտրութիւն Տ. Պետրոս Ծ. Վրդպտ.ի յԱռաջնորդութիւն Վիճակիս և տայ զօրենաձիր կոնդակն հաստատութեան յամի Տեառն 1872։ Եւ Տ. Պետրոս Ծ. Վրդպտ. մեկնեալ 'ի Կ. Պոլսոյ և ժամանեալ 'ի Սեբաստիա՝ ողջագուրէ զվերածնողն իւր զՏ. Կարապետ Ս Եպս. և անցեալ 'ի գլուխ նուիրական պաշտաման սկսանի վարել զնոյնն 'ի չանուէտ ծառայութիւն Ս. Եկեղեցւոյս և 'ի խնդութիւն համօրէն ժողովրդեան։ Եւ Տ. Կարապետ Եպս. տեսեալ զսիրելին իւր՝ զՏ. Պետրոս Ծ. Վրդ.ն բարձրացեալ յԱթոռ Առաջնորդական, մխիթարի հոգւով և վայելեալ ժամանակս ինչ անդորր և հանգիստ կնոնս 'ի Ս. Նշանի Մենաստանիս և անցուցեալ զաւուրս ծերութեանն աղօթիւք և լցեալ օրհնութեամբ աւանդէ զոգին յամի Տեառն 1877 և թաղի 'ի գաւթի Ս. Մենաստանիս՝ 'ի չարս հոգեւոյս նախորդացն։ Իսկ Տ. Պետրոս Ծ. Վրդպտ. (այժմ Արքեպս.) յօրէ անտի մինչև ցայսօր վարէ ամենայն անձնուիրութեամբ զԱռաջնորդական պաշտօն Նահանգիս Սեբաստիոյ։

ՏԻԳՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ

Գիւանապետ Ազգ. Առաջնորդարանին Հայոց

1900 Հոկտեմբեր 4, Սեբաստիա

(Վերջ՝ 15)

digitised by A.R.A.R.@